

Չարց Ի՞նչ գործառույթներ է պարտավոր կատարել մատակարարը գազամատակարարման ընթացքում:

Պատասխան Մատակարարը պարտավոր է իրականացնել բաժանորդի գազամատակարարումը՝ ԳՍՕԿ-ով և Պայմանագրով սահմանված պայմաններով: Գազամատակարարման ընթացքում մատակարարը պարտավոր է կատարել հետևյալ գործառույթները.

ա) գազամատակարարում,

բ) վճարման փաստաթղթերի կազմում և ներկայացում,

գ) բաժանորդի ահազանգով գազամատակարարման ընդհատում, դադարեցում, վերսկսում,

դ) բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների պարբերական հրահանգավորում ըստ ժամանակացույցի՝ գազասպառման համակարգի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ,

ե) սեզոնային գազամատակարարման դեպքում մատակարարման դադարեցում և վերսկսում բաժանորդի դիմումի համաձայն,

զ) կենցաղային սպառում ունեցող բաժանորդների գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների վերաբերյալ պայմանագրերի և դրանց կատարման պարբերական ստուգում,

է) բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի նկատմամբ հսկողություն իր կողմից կամ հանձնարարությամբ՝ սպասարկող կազմակերպությունների միջոցով: